ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-փետրվար)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 93.3%, 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 109.1%, իսկ 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-փետրվարին կազմել է 295,195.8 մլն.դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 4,375.6 մլն. դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 32,302.4 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-փետրվարին կազմել է 28,788.6 մլն.դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1,822.5 և 3,672.5 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-փետրվարին կազմել է 412,476.9 մլն.դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 23,087.4 և 426.8 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-փետրվարին կազմել է 258,852.3 մլն.դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 46,386.0 և 9,588.7 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 92.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.3%-ի և 101.9%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 101.0%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.8%-ի և 121.6%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 88.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.3%-ի և 113.1%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 87.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.2%-ի և 117.5%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-փետրվարին կազմել է 81,660.8 մլն.դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 21,757.6 և 36,424.3 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-փետրվարին կազմել է 1 59,034.2 մլն. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 24,798.8 և 10,511.0 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-փետրվարին կազմել է 51,173.4 մլն. դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1,345.3 մլն. դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 7,076.3 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-փետրվարին կազմել է 3,327.4 մլն. դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 10.9 մլն. դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 687.2 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 103.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 136.5%-ի և 92.7%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 84.3%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.5%-ի և 108.7%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 106.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 118.6%-ի և 93.0%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 100.3%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 83.1%-ի և 98.7%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-փետրվարին կազմել է 41,067.6 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 31,883.1 և 26,745.1 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-փետրվարին կազմել է 48,224.1 մլն.դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4,587.2 և 9,737.1 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-փետրվարին կազմել է 75,429.1 մլն.դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1,864.1 մլն. դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 11,859.2 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 65.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.6%-ի և 141.6%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 111.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.2% և 105.2%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 98.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.7%-ի և 121.4%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2021թ. հունվար-փետրվարին 2020թ. հունվար-փետրվարի նկատմամբ կազմել է 104.9%, 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 99.9%, 2019թ. հունվար-փետրվարին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.3%: ՍԳԻ-ն 2021թ.փետրվարին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 102.8%, 2020թ. փետրվարին 2019թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 101.2%, 2019թ. փետրվարին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 102.5%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2021թ. փետրվարի վերջի դրությամբ կազմել է 1,348,354.0 մլն դրամ, ինչը 366,751.0 մլն. դրամով կամ 37.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 663,565.0 մլն. դրամով կամ 96.9%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2021թ. փետրվարի դրությամբ կազմել է 89896 մարդ, ինչը 4187 մարդով կամ 4.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7470 մարդով կամ 9.1%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2021թ. փետրվարի դրությամբ կազմել է 62608 մարդ, ինչը 551 մարդով կամ 0.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2253 մարդով կամ 3.5%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2021թ. հունվար-փետրվարին կազմել է 925.4 մլն. դոլար, ինչը 128.2 մլն. դոլարով կամ 12.2%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 87.0 մլն. դոլարով կամ 8.6%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2021թ. հունվար-փետրվարին կազմել է -216.7 մլն. դոլար, ինչը 86.7 մլն. դոլարով կամ 28.6%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 122.8 մլն. դոլարով կամ 36.2%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2021թ. հունվար-փետրվարին կազմել է 354.4 մլն դոլար, ինչը 20.8 մլն. դոլարով կամ 5.5%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 17.9 մլն. դոլարով կամ 5.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2021թ. հունվար-փետրվարին կազմել է 571.1 մլն դոլար, ինչը 107.5 մլն. դոլարով կամ 15.8%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 104.9 մլն. դոլարով կամ 15.5%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2021թ. հունվար-փետրվարին կազմել է 192036 դրամ, ինչը 1568 դրամով կամ 0.8%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 19563 դրամով կամ 11.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2021թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 18,722.8 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -359,729.5 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 341,006.7 մլն. դրամ: 2020թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 44,843.5 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -18,433.8 և -26,409.7 մլն դրամ: 2019թ. հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 40,554.3 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -18,586.3 և -21,968.0 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ